

«ԶԱՎԱԽՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

Ս. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

Հայ պարբերական մամուլը պատմական յուրաքանչյուր ժամանակահատվածում ունեցել է իր յուրահատուկ զարգացումը: XX դարի առաջին երկու տասնամյակներում այն աչքի է ընկել պարբերականների առատությամբ, գաղափարական ուղղությունների և բովանդակության բազմազանությամբ: Այդ տարիներին կապիտալիզմի զարգացման ուղին թևակոխած Անդրկովկասում, ուր լույս էին տեսնում ինչպես հասարակական, քաղաքական, նույնպես և մշակույթի տարբեր ճյուղերի նվիրված ամսագրեր ու թերթեր, կարևոր երևույթ էր գավառահայ մամուլի երևան գալը: 1913 թվականից Ախալքալակում սկսում է հրատարակվել «Զավախք» շաբաթաթերթը, որ Գորիսում լույս տեսած «Գավառից» հետո երկրորդն էր: Թերթի խմբագիրն ու հրատարակիչն էր կանոնավոր կրթություն ստացած, առաջադեմ հրապարակախոս, հասարակական գործիչ Վարդան Ծախարոնյանը¹:

Վարդան Ծախարոնյանը ծնվել է 1872 թվականի դեկտեմբերի 22-ին, Ախալքալակում: Նախնական կրթությունն ստացել է տեղի միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Նա որպես ուսուցիչ աշխատել է Ախալքալակի ծխական դպրոցում, եղել է նույն դպրոցի հոգաբարձուն: Տեղական իշխանությունների դեմ ուղղված իր ըմբոստ ելույթների համար նա հետապնդվել է կառավարության կողմից և 1904 թվականին քստորվել Ռուսաստանի Կալուգայի մարզի Ժիզդրա քաղաքը: Երկու տարի քստորավայրում մնալուց հետո նա վերադառնում է Ախալքալակ: Այստեղ նա սկսում է ծավալել հասարակական և հրապարակախոսական լայն գործունեություն: 1912 թվականին նրա նախաձեռնությամբ կառուցվում է Ախալքալակի առաջին հիդրոէլեկտրակայանը: Այս նրա ղեկավարությամբ շարք են մտնում ծխական երկսեռ դպրոցի, մսի կոմբինատի, ալրուղացի, ձեթ-օճառի, կաշվի, փայտամշակման գործարանների շենքերը: 1915 թ. նա Ախալքալակում հիմնում է առաջին մանկատունը և կազմակերպում մեծ եղեռնից մազապուրծ որբուկների խնամքի ու դաստիարակության գործը:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Վարդան Ծախարոնյանը մեծ եռանդով շարունակում է աշխատել: 1922 թ. նա ստանձնում է Ախալքալակի կոմունալ բաժնի վարիչի պաշտոնը, ամենայն բարեխղճությամբ հետևում քաղաքի սանիտարական վիճակի, ճանապարհների բարեկարգման, բնակչության կենցաղսպասարկման աշխատանքներին:

1926 թ. Ծախարոնյանը ընտանիքով տեղափոխվում է Երևան, ուր մինչև 1937 թ. մշտում է ՀՊԿ-ի շինարարական բաժնի վարիչի պաշտոնը: 1937-ից մինչև իր կյանքի վերջը (1941 թ.) նա աշխատում է Երևանի Ստ. Ծախուրյանի անվան միջնակարգ դպրոցում որպես հաշվապահ:

Երախտավոր գործիչը միաժամանակ ծավալում է գրական-հրապարակախոսական գործունեություն: Նա «Աթոս», «Էլի էն», «Ծահ-Պարոն», «Վ. Ծ.» ծածկանուններով ֆելիետոններ, պատմվածքներ, հրապարակախոսական հոդվածներ է տպագրում «Զավախք», «Մշակ», «Տարազ» և այլ պարբերականներում: Վ. Ծախարոնյանը գրել է նաև բանաստեղծություններ, կենցաղային ու պատմական թեմաներով թատերախաղեր, որոնք բեմադրվել են Ախալքալակում, Երևանում, Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում: Առանձին գրքույկներով լույս են տեսել նրա «Արմեն և Ֆաթիմա» (Ալեքսանդրապոլ, 1909 թ.), «Արցունքի ծով» (Ալեքսանդրապոլ, 1912 թ.) պատմական դրամաները:

¹ Վարդան Գասպարի Ծախարոնյանի կյանքի և գործունեության մասին տեղեկությունները հաղորդել է նրա դուստրը՝ Լիլյա Ծախարոնյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Օգտագործել ենք նաև «Կամուրջ» ամսանախում «Զավախք» թերթի մասին տպագրված Հրահատ Սարգսյանի հոդվածը («Կամուրջ», Թիֆլիս, 1988, էջ 315—321):

Ախալքալակի տնտեսական, սոցիալական և հոգևոր կյանքի վերափոխման գործին ծառայելու նպատակներով Վ. Ծահպարտնյանը ձեռնամուխ է լինում «Ջավախք» գրական, հասարակական շաբաթաթերթի հրատարակմանը: 1915 թվականի հունվարից լույս է տեսնում «Ջավախքը»՝ շաբաթ մեկ անգամ: Թերթը բաղկացած է ութ էջից: Խմբագիրը՝ Վ. Ծահպարտնյանը իր թերթի անդրանիկ համարի առաջնորդողում, պարզելով պարբերականի նպատակները, գրում է. «Ոչ դատարկ սնափառությունը և ոչ թեթևամիտ անանությունը ուրիշներին ստիպեցին մեզ սկսել այսպիսի մի ծանր և պատասխանատու գործ: Ինքը՝ բարդացած կյանքը ստեղծում է մի պարբերական օրգանի անհրաժեշտությունը, որը մի կողմից ճիշտ կերպով պիտի պարզի մեր գավառի տնտեսական ու կուլտուրական դրությունը, մյուս կողմից ցույց տա այդ դրությունը բարելավելու միջոցները»:

«Ջավախք» շաբաթաթերթին աշխատակցում էին Վարդան Այվազյանը (Վ. Վազյան, Վ. Այ-Վազ), Արսեն ք. Բլրցյանը, Հարություն Խաչատրյանը, Արտաշես Բուդաղյանը և ուրիշներ:

Լինելով գավառական դեմոկրատիայի ներկայացուցիչը, Վարդան Ծահպարտնյանը գրում է. «Թերթը մի ուղղություն ունի, այն է՝ ծառայել ժողովրդի շահերին և կոպել գանազան գույնի թե՛ նյութականը, թե՛ ֆիզիկականը, և թե՛ բարոյականը շահագործող մարդկանց դեմ» («Ջավախք», 1913, № 26, էջ 211): Թերևս պետք է նշել, որ տիրապետող դասակարգի շահատակությունների դեմ հայտարարված պայքարը թերթը դիտում էր լոկ որպես գյուղաշխարհի տնտեսական ու բարոյական հետամնացության վերացման համար մղված պայքար: Եվ գյուղացիությանը պայքարի էր կոչում ոչ թե բռնության, այլ կրթություն զենքով: «Այս տխուր իրականության առաջ,— գրում է թերթը,— դիմում են քեզ, հասարակություն՝, սրափվիր թո խոր թմրությունից, նետվիր դեպի քաղաքակիրթ կյանքը...: Այդ է պահանջում ժամանակի ոգին: Իսկ եթե դրա հակառակ՝ հույսդ դնես կույր առաջնորդների վրա՝ հրանք երբեք չեն հասցնի քեզ քաղաքակիրթ ազգերի բարեկեցիկ վիճակին, այլ կթողնեն քեզ լուսո ու խավարի կես ճանապարհին» («Ջավախք», 1913, № 24, էջ 192): Այսինքն՝ շաբաթաթերթը բարոյական վերածնության մեջ էր որոնում աշխատավորության փրկության ուղին: Ինչևէ, պարբերականը գավառի հասարակության միտքը շարժող, հոգին կրթող հրապարակային մի ամբիոն էր, որն ինքնին նոր ու պայծառ երևույթ էր Ախալքալակի մշակութային կյանքում:

Ոգևորված «Ջավախք» շաբաթաթերթի լույս ընծայմամբ, առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները շտապում են խրախուսանքի խոսք ասել թերթի խմբագրին ու աշխատակիցներին: Արշավիր Մելիքյանը, օրինակ, իր «Խոսք» թերթում գրում է. «Մեր գավառական լրագրերն իրենց պատասխանատու կոչումով մեծ դեր կարող են կատարել մեր գավառական հայ հասարակության մտավոր ու քաղաքական առաջադիմության գործում: ... Սակայն որքան ծանր է, փշալից լրագրի դերը, մանավանդ գավառում, ուր ժողովուրդը դեռևս խարխափելով մթին խավարում, խորշում է լույսից, որի ճանաչները սլաքների պես ծակում են նրա տեսողությունը, այնուամենայնիվ, նույնքան հաճելի է, նույնքան գնահատելի այդ դերը: Ուստի մեր բուն համակրանքն այն երիտասարդներին, որոնք թև թևի տված ստանձնել են տպագրական խոսքի ժողովրդականացման միսիան՝ որքան հնարավոր է գիտակցություն մտցնել մեր գավառական հայ հասարակության ներքին ու արտաքին կյանքի մեջ» («Խոսք», 1914, № 2):

Գյուղագիր Ջավախեցին (Ղազարոս Տեր-Գրիգորյան) թերթի լույսընծայման առթիվ շնորհավորելով իր հայրենակիցներին՝ գրում է. «Ողջո՛ւյն այդ անվերջ պայար-դարդերին, դարեր դիմացող, իր սար ուներին անմոռունչ տանող մեր շարքաշ գյուղին ու անշուք հյուղին...: Ողջո՛ւյն, բյուր ողջո՛ւյն այդ արյունվլիկ դարդ ու խոցերը սրտի մրմուռով, կրակ-կսկիծով քրքրող, բուժող հեզ ընկերներին...» («Ջավախք», 1913, № 4, էջ 81): Իսկ Արսեն Բլրցյանը մաղթում է. «Թո՛ղ, Ձեր թերթը լինի խարազան մեր Ջավախքի ցավերը խարազանող, բազմաթիվ վերքերին սպեղանի դեղո՛ւ... Օ՛հ, մեր գյուղական բռունցքները, գյուղական խանութավորները, տգրուկի նման ծծել են արյունը, ցամաքեցրել խեղճ ու կերակ իր կողքին ապրող, աշխատող գյուղացիների» (1913, № 1, էջ 7):

Եվ իրոք, թերթի մեծ նպատակն է եղել՝ պաշտպանել աշխատավոր գյուղացիության շահերը, նրա արդարացի իրավունքները: «Մեր թերթը,— գրված է առաջնորդող հոդվածներից մեկում,— գյուղացիական թերթ է: Դրանով մենք տարբերվում ենք մյուս հայ թերթերից: Հայերի մեջ հրատարակվում են թերթեր վաճառականների, տերտերների, բանվորների և այլ դասակարգերի համար: Մեր թերթը հրատարակում ենք գլխավորապես գյուղացիների համար» (1913, № 5, էջ 34):

Ծառաթաթերթը լույս է տեսնում հարուստ և բազմաբովանդակ ծրագրով: Նյութերը ղեկավարված են հետևյալ բաժիններում. «Գավառ», «Տեղական կյանք», «Մամուլ», «Հայ-իսլական հարց», «Բալկանյան պատերազմ», «Բանասիրական»:

«Գավառ» խորագրով տպագրված հոդվածներում հիմնականում քննարկվում են գյուղի

սոցիալական ու տնտեսական կրանքի, բնակչության բարոյակրթական վիճակի, առողջապահական պայմանների բարելավմանը վերաբերող հարցեր: Հայտնի է, որ 1900 թ. հունիսի 12-ին ցարի կողմից Անդրկովկասի համար հաստատված հարկային ռեֆորմի նոր հախազծի համաձայն հարկերի ամբողջ ծանրությունը ընկնում էր աշխատավոր գյուղացիության վրա: Գյուղացիները բացի պետական տուրքեր վճարելուց, պարտավոր էին իրենց հաշվին պահել գյուղացետներին, գրագիրներին, հարկահավաքներին, հանդապահներին, մասնակցել նախարարների շինարարությանը և այլ աշխատանքների: «Գյուղական վաշխատուներ» և այլ հողվածներում ցույց էր տրվում, թե ինչպես տանուտերը, վաշխատուն տարվա վերջում յուրացնում էին գյուղացու աշխատանքը, նեղում նրան: «Խեղճ գյուղացիները ամբողջ տարին դառն քրտինք թափելուց հետո,— գրված է թերթում,— իրենց աշխատանքի արդյունքը լցնում են աղս վաշխատուի գրպանը և այդպիսով գյուղացին դառն դատում և դատարկ նստում է» (1913, № 4, էջ 31): Իր միտքը պատկերավոր արտահայտելու համար թերթը մեջ է բերում Ավ. Խահակյանի քառատողը.

**Խեղճ աղքատի հոգին դուրս գա,
Քարից-հողից հաց քամն,
Բեռով հացը հարըստին տա,—
Հարուստն իշխե, վայելե:**

(1913, № 4, էջ 31)

«Զավախք» շաբաթաթերթը միաժամանակ փորձում է առաջարկել գյուղափրկիչ իր ծրագրերը: Մի շարք հողվածներում («Գյուղատնտեսության հիմնական պայմանները», «Գյուղը և գյուղացին» և այլն) առաջարկվում է նախ համակողմանիորեն ուսումնասիրել գյուղը և ապա նոր մշակել միջոցներ գյուղը տնտեսապես, կուլտուրապես, ինչպես և առողջապահական տեսակետից վերափոխելու և առաջ մղելու համար: «Միությունը ուժ է» հողվածաշարը (1913, № 15, էջ 117—119, № 16, էջ 125—126) ընթերցողներին ծանոթացնում է Ծվելցարիայում, Դանիայում գործող գյուղատնտեսական ընկերությունների աշխատանքներին, հորդորում հայ գյուղացիներին՝ կազմակերպել նման ընկերություններ և համահմարվել դրանց շուրջը: Բարձր գնահատելով նման ընկերությունների դերը գյուղատնտեսության զարգացման գործում, գրում է. «Այդ միությունների շնորհիվ է, որ դանիացին այնքան ուժ ու կորով է ցույց տալիս բնության դեմ կռվելու մեջ: Դրանց շնորհիվ է, որ դանիացին չորացրել է ճահիճները, լճերը, նույնիսկ ծովի մասերը, դրանց շնորհիվ է, որ ավազոտ վայրերը դարձել են գեղեցիկ մարգագետիններ ու դաշտեր, դրանց շնորհիվ է, որ դանիացին այնքան լավ է պարապում գյուղատնտեսությամբ, որ այլևս բոլորովին մոռացել է կարիքն ու սովը, այլևս գաղափար չունի դրանց մասին» (1913, № 16, էջ 126):

Թերթը «Գյուղական բանկեր» առաջնորդող հողվածում (1913, № 4, էջ 26) առաջարկում է գյուղերում բանալ փոխառու բանկեր, որոնք թերթի կարծիքով կազատեին գյուղացուն վաշխատուի ճանկերից: Իսկ «Մանր վարկի նշանակությունը և նպատակը» հողվածում (1913, № 8, էջ 58—59) այն կարծիքն է պաշտպանվում, թե վարկի պահանջը չափազանց խիստ է զգացվում գյուղատնտեսության մեջ, ուստի «Միակ փրկությունը հասարակական ինքնօգնությունն է ի դեմս մանր վարկային ընկերությունների»:

Լույս տեսնելով առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, թերթը բնականաբար չէր կարող չարձագանքել պատերազմական իրադրություններին: Այսպես, «Ծվրուպան հրդեհի մեջ է», «Ամբարտապանը վերջ ի վերջո կընկնի» և այլ հողվածներում այն համոզմունքն էր արտահայտվում, թե պատերազմը զավթողական քաղաքականության հետևանք է: Այդ տարիներին թերթը հողվածներ էր տպագրում ազգերի եղբայրության, հայ և վրաց ու այլ ժողովուրդների դարավոր բարեկամության մասին: Հողվածներից մեկում Վ. Ծահպարոնյանը դիմում է երկու եղբայր ազգերին հետևյալ կոչով. «Հայ և վրացի ժողովուրդ, մեր ցավերը, մեր վերքերը ընդհանուր են, ոչ վրացին իր ազնվականներով ոգեվորվի, և ոչ էլ հայը իր հարուստներով, այլ մտածենք մեր հայրենիքը կուլտուրապես բարձրացնելու, կրթելու, արհեստները զարգացնելու, մեր արտն ու արտը կանոնավոր մշակելու և մեր ժողովուրդը իր կոչման բարձրության վրա կանգնեցնելու մասին: Ահա մեր գործը, ահա մեր կոչումը. եղբայր ենք մենք, մեր շահերը ընդհանուր են» (1914, № 3, էջ 18):

Շաբաթաթերթում մեծ թիվ են կազմում հայկական կոտորածներին, հայ ժողովրդի դառն ճակատագրին վերաբերող հողվածները: Շաբաթաթերթը անարգանքի պլուցին է գամում թուրքական ռճրագործ կառավարությանը, կոտորածների ղեկավարներին ու կազմակերպիչներին: «Նահատակների պատգամ» վերնագրով հողվածում (1915, № 2, էջ 6—9) հայ երիտասարդներից պահանջվում է օրհասական այդ օրերին հիշել հայ անցյալի հերոսներին, քաջ Վարդանին ու մյուս նահատակներին:

Դեռ 1913 թ. սկսած թերթում հայկական հարցի վերաբերյալ հողվածներով հանդես է

եկել առաջադեմ հասարակական գործիչ, խմբագիր, հրապարակախոս Մուշեղ Քազարստուհին «Pessimist» ծածկանունով: Նա իր հոդվածներում պնդում է, թե հայ ժողովուրդը իր հարցը ինքն իր ուժերով պիտի լուծի: Նա պիտի բռնի այն ուղին, որով ազատագրվել են սելջարսի մյուս քուր ժողովուրդները:

«Զավախք» շաբաթաթերթը հայրենասիրության դասեր է տվել իր ընթերցողներին, տպագրելով պատմական դեմքերին, իրադարձություններին նվիրված հոդվածներ: Թերթում առանձին բաժին է հատկացված հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների տոնակատարությանը: Վարդան Ծախարունյանի «Լույսի տոնը» վերնագրով հոդվածում ցույց է տրվում գրերի գյուտի կարևոր դերը հայ ժողովրդի գոյատևման, ազգսպասարկման, հոգևոր կյանքի զարգացման գործում: «Եթե չլիներ հայ գիրը,— կարդում ենք այնտեղ,— արդյոք գոյություն կունենայի՞ն մեր քաղցրալուր շարականները, տաղերը, ոսկեծղիկ եղիշեն, Փարպեցին, Եզնիկը, եթեբում սավառնող Նարեկացին, հոգեշունչ Ծնորհային և ուրիշ շատ շատերը, որոնցով մենք պարծենում ենք, որոնցով մենք հայտնի ենք և որոնցով մենք իբրև կուլտուրական ազգ գոյություն ունենք» (1913, № 34, էջ 270):

«Զավախք» շաբաթաթերթում տպագրվել են նաև հայ ժողովրդի անցյալի հոգևոր գանձարանից վերցված լավագույն նմուշներ, ինչպես և ժամանակի հայ գրողների ու բանաստեղծների գործեր: Թերթը փորձել է և իր կարծիքն արտահայտել Հովհ. Հովհաննիսյանի, Ռաֆֆու և մյուսների ստեղծագործությունների մասին:

Ծաբաթաթերթում մեծ տեղ են գրավում աճող սերնդի կրթության ու դաստիարակության հարցերին նվիրված հոդվածները: Ուսուցիչներից պահանջվում է առանձին ուշադրություն դարձնել մայրենի լեզվի ուսուցման, երեխաների մտավոր ու հոգևոր աշխարհի ձևավորման խնդիրներին: Որպես պատժիչ միջոցներ չընդունելով ծեծը և աշակերտներին դրպրոցից հեռացնելը, թերթը գրում է. «Պարոն մանկավարժներ՛ր, միք սարսափի այն բանից, որը ընդհանուր մարդկային բնահոսական պակասություն է, որի առաջը չի կարող առնել ոչ պատիժը, ոչ էլ սարսափը, այլ միայն առաջը կարող է առնել իսկական կրթությունը» (1914, № 6):

«Զավախք» ուներ և հավելված, որը լույս էր տեսնում տարին մեկ անգամ առանձին գրքուկով: «Զավախքի» հավելվածներից է Հովհաննես Մալխասյանի «Զավախքի երազը» գրական-գեղարվեստական պատկերը (1913, № 27):

Այսպիսով, «Զավախք» շաբաթաթերթը, ինչպես վկայում են այնտեղ տպագրված նյութերը, ժամանակին արթնացրել է գյուղաշխարհի բնակչության միտքը, ուշաբերելով նրան, հանձնարարել է՝ բռնել բարեկրթվելու, հոգով բարձրանալու, վեհանալու, հզորանալու ճանապարհը:

Ծաբաթաթերթի գործունեության մասին դրական կարծիքներ են հայտնվել «Трѣхне-ский листок», «Кавказ», «Баку» և այլ պարբերականներում: «Баку» թերթը 1913 թվականի № 16-ում գրել է. «Զավախք» շաբաթաթերթը ցանկանում է կռվել սակավաճողության ու գյուղացիական աղքատության դեմ, տարածելով գյուղացիների մեջ գյուղատնտեսական գիտությունների և նոր մեքենաների օգուտը: Այսպիսով, նոր թերթը հենվում է առողջ տարրի վրա, գյուղացիության վրա և նվիրում է իրեն գյուղացիական շահերին» (1913, № 5):

1916 թ., երբ առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով իրար հետևից փակվում են հայ ամսագրերն ու թերթերը, դադարում է լույս տեսնել նաև «Զավախքը»: Ծաբաթաթերթը թեև կարճ կյանք է ունենում (ընդամենը չորս տարի), սակայն իր արծարծած հարցերի կարևորությամբ ու պրոպագանդած գաղափարներով արժանի տեղ է գրավում անցյալի հայ պարբերականների շարքում:

С. С. ПАЗАРЯН—Еженедельник «Джавахк».—К числу примечательных явлений армянской культурной жизни первых десятилетий 20-го века относится возникновение провинциальной печати. В 1913 г. в г. Ахалкалаке начинает выходить газета «Джавахк», вторая по счету после горисской «Гавар».

Издателем и редактором еженедельника был прогрессивный общественный деятель и публицист Вардан Шахпаронян (1872—1941). Хотя газета просуществовала всего четыре года, но благодаря важности затронутых вопросов, пропагандируемых идей и широте отклика на них она по праву занимает достойное место в ряду значительных изданий армянской печати прошлого.